ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» դեկտեմբերի 2020թ. № 291

ԵՐԿԱԹԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԳՐԱՆԻՏԵ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի գլխավոր մասնագետ Միշա Թամամյանի զեկուցագիրը, Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում զոհված և Սպիտակի քաղաքային գերեզմանատանը հուղարկավորված զինծառայողների գերեզմաններում երկաթե կոնստրուկցիաներով գրանիտե վահանակներ պատրաստելու նպատակով՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 66 791 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» դեկտեմբերի 2020թ. № 292

ԹԵՐԵԶԱ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղիշե Գևորգի Շիրոյանի մահից հետո՝ Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող 06006 234-9 կադաստրային ծածկագրով 0,203 հեկտար մակերեսով տնամերձ հողամասը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2097094 վկայական) ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2020 թվականի հոկտեմբերի 21-ի վկայագրի փոխանցվել է Թերեզա Գրիգորի Գրիգորյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Թերեզա Գրիգորի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թերեզա Գրիգորի Գրիգորյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում 06006 234-9 կադաստրային ծածկագրով 0,203 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 285» հասցեն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 4